

«Փառք Յարութեան Քո Տէր»

Սուրբ Յարութեան խորհուրդը մեր էութեան մէջ կը հաստատէ կեանքը իր երկու երեսներով: Ներկայ, որուն ներկայ պատկերն ենք եւ հորիզոնէն անդին մեզ սպասող յաւիտենական կեանքը, որուն յոյսով նոյնքան էական է ներկայ ժամանակը Աստուծոյ հետ ապրելու տեսակետէն: Սուրբ Յարութեան խորհուրդը ոսկէ օղակ է մեզ Արարիչ Աստուծոյ հետ կապող, միմիանց դարձնելով սրտակից, բոլորիս շնորհները ի մի բերելով դարձնելու գօրութեան:

Յարութեան փրկարար խորհուրդով մեր ժողովուրդը դարեր շարունակ դիմագրաւեր է դժուարութիւններն ու գրկանքները, Յարութեան հաւատով լուսաւորեր է իր հոգեւոր ու ազգային կեանքը եւ կերտեր է իր փառաւոր յաղթանակները:

Սիրելի հարագատ հայորդիներ, դուք էք Քրիստոսի Յարութեան գօրութիւնը խորհրդանշող ներկայութիւնը ձեր հաւատով ու սիրով: Սիրեցէ՛ք գԱստուած ձեր հաւատքի ամուր կեանքով, ձեր օճախները վերածեցէ՛ք մէյմէկ եկեղեցիի, որպէսզի մեր կեանքը ըլլայ ապահով ու հաստատ:

«Քրիստոս Յարեալ Ի մեռելոց, Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»

ՃԱՐԱԿԱՆ

Շարականը շարերու (երգերու) հաւաքածոյ մըն է, որ կը բովանդակէ Տէրունի օրերու, Սրբոց յիշատակներու եւ Պահոց օրերու նուիրուած եկեղեցական երգեր:

Հայ եկեղեցւոյ մէջ երգուած շարականները գրուած են ութը ձայներու համաձայն եւ ունին 8 տեսակ, հետեւեալ անուններով. Օրհնութիւն, Հարց, Մեծացուցէ, Ողորմեա, Տէր Յերկնից, Մանկունք, Ճաշու, Համբարձի:

Ներսէս Շինող կաթողիկոս (Է. դար) Վարդավառի տօնին, լսելէ վերջ հարց շարականներու անկանոնութիւնը, պարտականութիւն տուած է ձոն Բարսեղ վարդապետին, որպէսզի կարգ ու կանոն դնէ շարականներուն:

Հեղինակներու մասին առաջին անգամ Գրիգոր Տաթեւացի ցանկ մը պատրաստած է, «Որք գծորանս Հոգւոյն արբին» սկսուածով, բայց վաւերական չէ նկատուած (տե՛ս ԳԻՒԲ ՀԱՐՑՄԱՆՑ, երես 637ա-638ա):

Շարականներու հեղինակները նկատի կ'ունենանք դար առ դար:

1.- Հինգերորդ դարու մէջ գրուած շարականներուն թիւը քիչ է եւ անորոշ: Հինգերորդ դարու շարականներու հեղինակ նկատուած են Ս. Սահակ, Ս. Մեսրոպ, Յովհաննէս Մանդակունի:

2.- Եօթներորդ դարուն մէջ՝ Կոմիտաս կաթողիկոս, որ խմբագրած է Հոփսիմեանց «Անձինք Նուիրեալք»-ը, այբուբենական կարգով: Սահակ Զործափորեցի կաթողիկոսին կը վերագրուին Նաւակատեաց, Խաչի ութօրէից, Վարդավառի եւ Գիւտ Խաչի կանոնները:



ԲՈՒ ԽՕՍԲԵՐ ԽՄ ՈՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԻՆՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԶ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 9 ԱՊՐԻԼ 2023 ԹԻՒ 15

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գրծ. 1.15-26: Մր. 16.1-8

Ա.ԶԱՏԻԿ

ՏՕՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Շարաք օրը երբ անցաւ, Մարիամ Մագթաղեմացին, Մարիամ՝ Յակոբի մայրը եւ Սողոմէն գացին խումկեր գնեցին եւ պատրաստեցին, որպէսզի երթան եւ օժեն Յիսուսի մարմինը: Կիրակի առաւօտ կանուխ, արեւածագին, գերեզման եկան: «Ո՞վ պիտի գտրէ գերեզմանի մուտքին դրուած քարը», կը հարցնէին իրարու, որովհետեւ քարը շատ մեծ էր: Սակայն, երբ նայեցան տեսան, որ քարը արդէն իսկ գտրուած էր: Գերեզմանէն ներս մտան եւ ճերմակ զգեստ հագած երիտասարդ մը տեսան, որ աջ կողմը նստած էր: Մարսափեցան: Երիտասարդը ըսաւ անոնց. «Մի՛ վախճաք, զիտեմ, որ խաչուած Նազովրեցի Յիսուսը կը փնտռէք, բայց հոս չէ, յարութիւն առաւ: Տեսէ՛ք զինք հոս դրած էին: Այժմ գացէ՛ք, ըսէ՛ք իր աշակերտներուն եւ Պետրոսի, որ ահա Յիսուս ձեզմէ առաջ կ'երթայ Գալիլիա: Հոն պիտի տեսնէք զինք, ինչպէս որ ըսած էր ձեզի»:

Երբ ասիկա լսեցին, դուրս փախան գերեզմանէն, զարհուրած եւ ապշահար, ու ոչ մէկուն բան մը ըսին, որովհետեւ կը վախճային:

Աստուած իր Որդիին խաղաղութիւնը տուաւ մեզի

«Մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ դրուեցաւ» (Ես. 53.5): Աստուած առաւ մեր մեղքերուն պատճառած խռովութիւնը եւ զայն դրաւ Քրիստոսի վրայ, եւ առաւ Քրիստոսի խաղաղութիւնը եւ զայն դրաւ մեր վրայ: Քրիստոսի կապուած մարդը իր սրտին մէջ կը կրէ այն խաղաղութիւնը, որ Քրիստոս ինք ունէր: Քրիստոսապարզեւ խաղաղութիւնն ո՛չ միայն մեզ խաղաղ կը պահէ փորձութեանց դիմաց, այլեւ՝ յաղթող կը դարձնէ անոնց դէմ: Կեանքի ծովերը միշտ կրնան փոթորկիլ եւ սարսափի ու յուսահատութեան մատնել մարդիկը, բայց անոնք, որոնք Աստուծոյ զաւակներն են, անոնք անվրդով կերպով կը շարունակեն իրենց հաւատքի զնացքը յաղթականօրէն:

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ ՕՐՉԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՍ ԶԱՏԻԿ



Զատիկ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եկեղեցական օրացոյցին մէջ այսպէս անջատ կերպով յիշուած են Զատիկը եւ Յարութիւնը:

1.- Ի՞նչ է Զատիկ բառին իմաստը:

Զատիկ բառը ունի բազմաթիւ բացատրութիւններ: Ոմանք նմանութիւն կը գտնեն Եբրայեցիներու Պասեֆին (Pasover) հետ: Պասեֆ կը նշանակէ ելք: Հրեաներու ամենամեծ ու յարգուած տօներէն մէկն է Պասեֆը: Անոնք կը յիշատակեն Եգիպտոսի ծանր լուծէն իրենց ազատիլն ու ելքը: Իսկ մենք՝ Քրիստոնեաներս, Յիսուսի չարչարանքի արդիւնքով հրաշափառ Յարութեամբ կը յիշատակենք մարդկութեան մահուան իշխանութենէն ու սատանայի ծառայութենէն դուրս գալը եւ երկինքի արքայութեան արժանի դառնալը: Յիսուսի կեանքին վերջին դրուագները տեղի ունեցան հրեաներու Պասեֆի տօնին:

2.- Զատկուան ժողովրդական սովորութիւններ:

Զատկուան ժողովրդական սովորութիւններէն կարելի է յիշատակել հաւկիթը կարմիր ներկելը եւ հաւկիթախաղը:

Հիները հաւկիթը կ'ընդունէին իբրեւ տիեզերքի խորհրդանշան եւ կը հաստատէին, թէ հաւկիթին կեղեր կը նշանակէ ցամաքը, սպիտակը՝ ջուրը, դեղնուցը՝ կրակը:

Սովորութիւն էր գարնանամուտի օրը իբրեւ ընծայ իրարու հաւկիթ տանիլ, մանաւանդ կարմիր: Նաեւ ոսկիէ կամ արծաթէ շինուած կարմիր հաւկիթներ կը տարուէին իշխաններուն, իբրեւ հպատակութեան նշան: Ասիկա արեւելքի մէջ, մանաւանդ հայերուն եւ պարսիկներուն մօտ:

Բոլոր կրօններուն մէջ ալ հաւկիթը իր կարեւոր տեղը ունէր, մինչեւ իսկ Հռոմէացիները եւ յոյները հաւկիթ կը նուիրէին իրենց աստուածներուն՝ սրբուելու եւ մաքրուելու համար:

Հրեաները Պասեֆի տօնին կը պատրաստէին բազարչ հաց (առանց թթիւմորի հաց): Պասեֆի սեղանին վրայ անպայման պէտք էր ըլլար, նաեւ գտակական գառնուկը եւ պինդ խաշուած հաւկիթը:

Հաւանաբար Պասեֆի այս սովորութիւնը փոխանցուեցաւ քրիստոնեաներուն:

Զատկական հաւկիթը Քրիստոնեանիս համար խորհրդանշան է այն ժայռէ գերեզմանին, ուրկէ Քրիստոս Յարութիւն առաւ:

3.- Ինչո՞ւ հաւկիթը կարմիր կը ներկեն:

Կարմիր ներկը անցեալին ամէն տեղ չէր գտնուեր: Յայտնի է, թէ կարմիր ներկին հայրենիքը Արեւելքն է, ուր կը գտնուի որդան կարմիրը, որմէ կ'արտադրուէր կարմիր ներկը եւ կը տարածուէր ամբողջ աշխարհին մէջ:

Հաւկիթը կարմիր ներկելու աւանդութիւնը կը բացատրուի հետեւեալ ձևով: Նախ կարմիրը սիրոյ գոյն է: **Երկրորդ**՝ հայերը բնապաշտ ժողովուրդ եղած են, եւ բնութեան մէջ գերընտիր բերքն է որդան կարմիրը: Ինչպէս որ բնութեան ձնեղաբերութիւններուն մէջ հրաշալի է հաւկիթը, ուստի հաւկիթը կարմիր ներկելով նուիրագործած են գայն: **Յրրորդ**՝ հաւկիթը կարմիր կը ներկուի որպէս ուրախութեան նշան: **Չորրորդ**՝ կարմիրը կը խորհրդանշէ, նաեւ որպէս գոհի արիւնը, որ կը բացատրուի իբրեւ Քրիստոսի թափած արիւնը աշխարհի փրկութեան համար:

Հաւկիթը կը ներկեն Զատկուան նախորդ օրը՝ Շաբաթ օր:

Հ ՈՔԵՒ ՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ՏԵՐՆ Է ՄԵՐ ԼՈՅԱԸ ԵՒ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ

Տէրն է լոյսս եւ փրկութիւնս, որմէ՞ պիտի վախնամ ես (Մկ. 27.1): Մուրը կը վախցնէ մարդ արարածը, մանաւանդ եթէ այդ մուրը մեղքին պատճառած մութն է: Մութին մէջ կայ անորոշութիւն, եւ երբեմն ալ գէշ անակնկալներ: Աստուած իր Որդիին ճամբով մեզ ազատագրեց մեղքի խաւարէն: Աստուած ինքն է, որ մեղքով խաւարած այս աշխարհին մէջ կը լուսաւորէ ճամբան իր զաւակներուն: Զանոնք կը լուսաւորէ ամէն անգամ, երբ կասկածամտութիւնը կամ անորոշութիւնը պատէ զիրենք: Լոյսը Աստուծոյ առաջնորդութեան խորհրդանշանն է: Ուստի, երբ մարգարէն կ'ըսէ, թէ Աստուած մեր լոյսն է, ըսել կ'ուզէ, որ Աստուած մեր առաջնորդն է: Առաջնորդ մը՝ որ մեզ կ'առաջնորդէ փրկութեան եւ ազատագրութեան:

Տէ՛ր, ընդունէ՛ մոլորածս, որ լեռները փախած են յանցանքի պատճառով տիրոջմէ՛ հալածուած չար ծառայի պէս: Եւ հրաժարած են սուրբ եղբայրներէն, հեռացած՝ սուրբ ծառայութենէն, որովհետեւ կը սիրէի մեղքը եւ նախատինք էի կրօնատուներուն համար: Անյագօրէն կը գրկէի ու խախտէի պատուիրանները, անգութ էի աղքատներուն եւ հակառակող՝ սպասատուներու հանդէպ անողորմ էի հիւանդներու եւ անմխիթար՝ նեղուածներու նկատմամբ, արժանի իսկ չէի ճգնատրներուն մէջ ըլլալու:
Ե. Ասորի

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒՉԵՍ...

ԵԹԷ Կ'ՈՒՉԵՍ ԳԻՏԵԱԿԱՆ ԱՆՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ԵՒ ՄԵՐ ԱՐՄԱՏԸ ԵՂՈՂ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՊԿԱՆՈՒԹԻՒՆԵՐ ԵՒ ԱՄԵՐ ՎԱՍՏԱՆԵՐ Կարդա՛ր՝ ՍԱՂՄՈՍ 14

Անմիտ մարդիկ իրենց միտքին մէջ ըսին. «Աստուած չկայ», ուստի ապականեցան եւ զգուելի արարքներուն մէջ ինկան, չկայ՝ մէկը, որ բարին գործէ: ՏԵՐԸ երկինքէն կը նայի մարդոց, տեսնելու համար, թէ կա՞յ արդեօք իմաստուն մարդ մը, որ Աստուծոյ կը դառնայ: Ամէնքն ալ խտորեցան եւ մոլութեան գիրկը ինկան: Չկայ՝ մէկը, որ բարին գործէ, չկայ՝ մէկը, ո՛չ իսկ մէկը:

Երբեք խելքի պիտի չգա՞ն բոլոր անոնք՝ որոնք չարիք կը գործեն: Անոնք՝ որոնք իմ ժողովուրդս կ'ուտեն, հացի պէս, եւ ՏԻՐՈՉԸ չեն աղօթեր: Բայց յանկարծակի՝ ՏԵՐԸ զիրենք ահ ու դողի պիտի մատնէ, որովհետեւ Աստուած արդար մարդոց հետ է:

Չարագործները աղքատին խորհուրդները կը հեզնեն, բայց ՏԵՐԸ ի՛նքն է անոր ապաւէնը: Ո՛հ տեսնէի Աստուծոյ ժողովուրդին փրկութիւնը, որ Սիոնէն պիտի գայ: Երբ ՏԵՐԸ ետ դարձնէ գերի տարուած իր ժողովուրդը, Յակոբի սերունդները պիտի ցնծան եւ ուրախանան:

ԱՄԷՆ ՕՐ ԲԱՆԱՆՔ ՄԵՐ ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԸ ԵՒ ԱՆՈՐ ՄԷՋԷՆ ՄԵՐ ԱՂՕԹՔԸ ԿԱՏԱՐԵՆՔ ԱՌ ԱՍՏՈՒԱՏ